USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

COUNTERPART INTERNATIONAL
In partnership for results that last.

ԼՈՒՍԱՍՏՂ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ներածություն

Վերջին տարիներին քաղաքացիական հասարակության մի շարք կառույցներ իրականացրել են հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեության համար անարգել միջավայրի ձևավորմանն ուղղված միջոցառումներ, սակայն իրավիճակը մնում է անբավարար: Այդպիսի իրավիճակը դեռևս շատ երկար կմնա, քանի դեռ էական դրական տեղաշարժ կատարելու և հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ պետական կառույցների կողմից ծանրակշիռ գործնական քայլեր չեն արվում:
Իրավիճակի աստիճանական և արմատական բարելավման համար պետք է մշակել լայնամասշտաբ գործողությունների ծրագիր, որը կապահովի մինչև 2027թ. քաղաքաշինական և ինժեներական ենթակառույցների, տրանսպորտային, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտային, սոցիալական ենթակառուցվածքի հիմնարկների հիմնական մատչելիության և հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը:
«Լուսաստղ» ՀԿ-ի կողմից հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց շրջանում կատարած հետազոտություններից պարզվել է, որ մատչելի միջավայր չլինելու պատճառով նրանց 90%-ը առհասարակ տնից դուրս չի գալիս, իսկ 99 %-ը չի օգտվում հասարակական տրանսպորտից, հիմնականում խուսափում ենհանրային վայրեր այցելություններից:
Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մատչելի միջավայրի ձևավորմանը հնարավոր է հասնել միայն պլանավորված և հետևողական աշխատանքի շնորհիվ՝ ՏԻՄ-երի, քաղ. հասարակության ներկայացուցիչների և գործարար շրջանակների համագործակցությամբ:
Գործնականում անհրաժեշտ է ապահովել համապատասխան մեխանիզմներ, որոնք կբացառեն տվյալ գործընթացում մատչելիության շինարարական նորմերի անտեսումը:
Այս քաղաքականության փաստաթուղթը մշակվել է «Լուսաստղ» բարեգործական ՀԿ-ի ««Ներառում հավասարության սկզբունքով» ծրագրի շրջանակներում: Քաղաքականության փաստաթուղթը մշակվել է հաշմանդամություն ունեցող անձանց կողմից՝ իրենց իրականացրած դիտարկումների և ոչ մասնագիտական դիտողությունների հիման վրա: Այս փաստաթուղթը մշակելիս հիմք է ընդունվել հետևյալ բանաձևը. «Կա հիմնախնդիր, եթե դրան բախվում են խնդիրը կրող անձիք»: Փաստաթղթի մշակման մեջ ներգրավված հաշմանդամություն ունեցող անձիք հավատում են, որ Վանաձորն ավելի բարեկեցիկ և ներառական կլինի, եթե ունենա խելամիտ և նորմատիվներին համապատասխան հարմարեցումներ:
«Ներառում հավասարության սկզբունքով»ծրագիրն իրականացվում է «Լուսաստղ» ՀԿ-ի կողմից Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) «Գործուն քաղաքացիական հասարակություն» (ԳՔՀ) ծրագրի շրջանակներում:
ԱՄՆ ՄԶԳ ԳՔՀ հնգամյա ծրագիրն իրականացվում է Քաունթերփարթ Ինթերնեշնլի կողմից՝ Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի հետ համատեղ:

Քաղաքականության փաստաթղթի հետ կապված հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել «Լուսաստղ» բարեգործական ՀԿ-ի հետ.

Էլ հասցե՝ lusastghhk@gmail.com

Հեռախոս՝ +37455707191

Խնդրի նկարագիր

2010թ. ՀՀ վավերացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան, որի վավերացմամբ պետությունը պարտավորվել է ապահովել հավասար հնարավորություններ և մատչելի պայմաններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և իրավունքների պաշտպանության նպատակով: 2017թ. ՀՀ կառավարությունն ընդունել է «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագիրը», որով հաշմանդամություն ունեցող անձանց հարցերն աստիճանաբար ընդգրկվեցին կյանքի բոլոր ոլորտներում: 2021թ. ընդունվեցին «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքները, որով օրենսդրական մակարդակում Հայաստանի Հանրապետությունը հրաժարվեց հաշմանդամության բժշկական մոտեցումից՝ անցում կատարելով մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման:

2023թ. կառավարությունն ընդունեց հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը, որի նպատակն է խթանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումը կյանքի բոլոր ոլորտներում, համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով ապահովել նրանց անկախ կյանքը և սոցիալական ներառումը: Հիմնվելով «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագիրի»հիմնական ուղղությունների վրա և հաշվի առնելով ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները՝ սահմանվել են7 առաջնահերթություններ, որոնց միջոցով հնարավոր է բարելավել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:

Յուրաքանչյուր առաջնահերթության շրջանակում նախատեսվել են այնպիսի միջոցառումներ, որոնք նպաստում են հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ կարծրատիպերի և խտրական վերաբերմունքի դեմ պայքարին, նրանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

2024թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում հաշվառված է հաշմանդամություն ունեցող շուրջ 194,000 անձ, որը կազմում է ՀՀբնակչության մոտավորապես 7%-ը: Հատկանշական է, որհաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքը և համայնքում ներառումը մեծապես կախված է միջավայրից, որի հիմքում դիտարկվում են քաղաքաշինական, տեղեկատվական և հաղորդակցական համակարգերը, հաշմանդամություն ունեցող անձանց կողմից այդ համակարգերում առկա անհաղթահարելի խոչընդոտները: Կոնվենցիան առաջարկում է վերացնել նման խոչընդոտները՝ որպես հաշմանդամություն ունեցող անձանց հավասարության իրավունքի հիմնական քայլ, շեշտադրում կատարելով համընդհանուր դիզայնի և խելամիտ հարմարեցումների վրա:

Ըստ 2023-2027 թվականների համալիր ծրագրի, տարբեր խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց համար արդեն կառուցված շենքերը, պատմության և մշակույթի հուշարձանների տարածքներըմինչև 2027թ. պետք է դառնան հնարավորինս մատչելի, ըստ

անհրաժեշտության համադրելով համընդհանուր դիզայնի և խելացի հարմարեցումներիմոտեցումը։

Վերջին տարիներին քաղաքացիական հասարակության մի շարք կառույցներ իրականացրել են հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեության համար անարգել միջավայրի ձևավորմանն ուղղված միջոցառումներ, սակայն իրավիճակը մնում է անբավարար։ Այդպիսի իրավիճակը դեռևս շատ երկար կմնա, քանի դեռ էական դրական տեղաշարժ կատարելու և հիմնախնդիրը լուծելու ուղղությամբ պետական կառույցների կողմից ծանրակշիռ գործնական քայլեր չեն արվում:

Իրավիճակի աստիճանական և արմատական բարելավման համար պետք է մշակել լայնամասշտաբ գործողությունների ծրագիր, որը կապահովի մինչև 2027թ. քաղաքաշինական և ինժեներական ենթակառույցների, տրանսպորտային, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտային, սոցիալական ենթակառուցվածքի հիմնարկների հիմնական մատչելիության և հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ կենսագործունեության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը։

«Լուսաստղ» ՀԿ-ի կողմից հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց շրջանում կատարած հետազոտություններից պարզվել է, որ մատչելի միջավայր չլինելու պատճառով նրանց 90%-ը առհասարակ տնից դուրս չի գալիս, իսկ 99 %-ը չի օգտվում հասարակական տրանսպորտից, հիմնականում խուսափում ենհանրային վայրեր այցելություններից։

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մատչելի միջավայրի ձևավորմանը հնարավոր է հասնել միայն պլանավորված և հետևողական աշխատանքի շնորհիվ՝ ՏԻՄ-երի, քաղ. հասարակության ներկայացուցիչների և գործարար շրջանակների համագործակցությամբ։

Գործնականում անհրաժեշտ է ապահովել համապատասխան մեխանիզմներ, որոնք կբացառեն տվյալ գործընթացում մատչելիության շինարարական նորմերի անտեսումը։

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենք/շինություններում բնակչության սակավաշարժուն խմբերի համար մատչելի պայմանների ապահովման նպատակով շենքերի և շինությունների ֆունկցիոնալ-հատակագծային տարրերի, դրանց տեղամասերի, մուտքային հանգույցների, հաղորդակցուղիների, տարհանման ուղիների, բնակության, սպասարկման և աշխատատեղերի սենքերի (գոտիների), ինչպես նաև դրանց տեղեկատվական և ինժեներական սարքավորվածության վերաբերյալ հիմնական պահանջները սահմանված են հետևյալ նորմատիվ ակտերով.

1. ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի N 253-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ IV-11.07.01-2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերով,

2. ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2018 թվականի ապրիլի 5-ի N 43-Ա հրամանով հավանության արժանացած ՀՀԿՀ 23-101-2017 «Բնակչության սակավաշարժ

խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու»-ով սահմանված չափանիշներով:

Միաժամանակ հարկ է նշել, որ քաղաքաշինության բնագավառի նորմատիվ ակտերի գերակշիռ մասը պարունակում է բազմաթիվ կարգավորումներ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության միջոցառումների պարտադիր պահանջների ապահովման վերաբերյալ: Ուստի, բացի վերը թվարկված նորմերից, առաջարկվում է դիտարկել նաև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի կողմից 2020-2024թվականներին ընդունված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համալիրը, որը վերաբերելի է տարածքների բարեկարգման միջոցառումներին, քաղաքաշինական միջավայրի ձևավորմանը, շենքերին ու շինություններին, դրանց բաղկացուցիչ մասերին:

Քաղաքաշինության ոլորտում տեսչական մարմինը, որն իրականացնում է վերահսկողական ծառայություններ և կիրառում է պատասխանատվության միջոցներ, պետք է ունենա լայն լիազորություններ և պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով զբաղվող կազմակերպությունների հետ սերտ համագործակցությունը: Տեսչության կառուցվածքային ու տարածքային ստորաբաժանումների աշխատողները պետք է ունենան մատչելիության շինարարական նորմերի և համընդհանուր դիզայնի վերաբերյալ ոչ ֆորմալ կրթության շարունակական հնարավորություններ: Կառույցի հաշվետվողականության և թափանցիկության մեխանիզմները հավելյալ երաշխիքներ են գործընթացների ներառականության ապահովման տեսանկյունից: Անհրաժեշտ է հրապարակել նաև տեսչական ստուգումների մասին մանրամասն տեղեկություններ: Հաշվետվողականության հիմքում պետք է լինի ճարտարապետահատակագծային առաջադրանքի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստող ընդունող հանձնաժողովի անդամների շրջանում հաշվետու լինելու գաղափարի ձևավորումը: Անհրաժեշտ է հասնել նրան, որ պատասխանատուները մշտապես հաշվետու լինեն հասարակության առջև, իսկ հաշմանդամություն ունեցող քաղաքացիները՝ պահանջատեր իրենց իրավունքների հարցում:

Ներկայումս, երբևէ չի բարձրաձայնվել տվյալ տեսչական մարմնի աշխատանքների մասին: Կառույցը որևէ անգամ չի հրապարակել իր կատարած աշխատանքների արդյունքները, մինչդեռ օր օրի տեսնում ենք նորակառույցներ, որտեղ կոպտորեն խախտվում են օրենքով սահմանված նորմերը: Ընդունող հանձնաժողովի կազմում ներգրավվում են կառուցապատողի, կապալառուի, տեխնիկական հսկողություն և օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում՝ հեղինակային հսկողություն իրականացնող անձինք, քաղաքաշինական պետական տեսչության համապատասխան տարածքային բաժնի, մատակարար կազմակերպությունների, ինչպես նաև օրենքով համապատասխան վերահսկողական իրավասություններով օժտված այլ 8-10 շահագրգիռ պետական մարմինների և իրավասու մարմնի ներկայացուցիչները: Մեր դիտարկումներով, ըստ էության տվյալ հանձնաժողովը չի գործում,չի կատարում համապատասխան մշտադիտարկումը և

այն կրում է ձևական բնույթ,անգամ հանձնաժողովականները մեկը մյուսին չեն ճանաչում: Հատկանշական է, որ հանձնաժողովի անդամները նախագիծը հաստատելու համար ուշադրություն են դարձնում միայն նախագծում դրսից թեքահարթակի առկայությանը: Մինչդեռ կան հաստատված նորմեր, որոնց չեն տիրապետում հանձնաժողովի անդամները: Գործնականում անհրաժեշտ է բարձրացնել ընդունող հանձնաժողովի անդամների գիտելիքները մշտադիտարկման գործընթացում, նրանց շրջանում նպաստել շինարարական նորմերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, որոնց արդյունքում կբացառվեն այս գործընթացում շինարարական նորմերի անտեսումը:

Վանաձոր համայնքում առաջին անգամը չէ, որ բարձրաձայնվում է այս խնդիրը, սակայն առաջին անգամ է, որ շեշտադրվում է աշխատանքը մի ոլորտի հետ, որտեղ երբևէ ըստ էության չեն իրականացրել մոնիտորինգ և հաշվետու չեն եղել իրենց աշխատանքներում:Այժմ, երբ կա հասարակական պահանջ, որի արդյունքում հանձնաժողովն աշխատի ըստ իր կանոնակարգի և հաշվետու լինի հասարակության առջև, ապա չի խախտվի մոտ 3,000 հաշմանդամություն ունեցողների իրավունքները, ՏԻՄ օրենքի Հոդվածը այն է 10.1 «Համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը», որի կիրարկման արդյունքում նրանք կկարողանան ներառվել հասարակություն:

Եզրակացություն

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2023-2027 թվականների համալիր ծրագիրը սահմանում է առաջնահերթություններ և միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավմանը, հաշմանդամության հիմքով խտրականության բացառմանը, բոլոր ոլորտներում նրանց լիարժեք և արդյունավետ մասնակցության ապահովմանը:Համալիր ծրագիրը նաև միջոց է՝ ապահովելու ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի իրականացումը ՀՀ-ում:Ընդունվեցին մի շարք օրենքներ, օրենսդրական ակտերով կարգավորվեցին հաշմանդամություն ունեցողների համար մատչելի միջավայրի ապահովումն ու խտրականության բացառումը:

Սակայն ներկայում շարունակվում է շենք-շինությունների կառուցումը՝ հաշվի չառնելով մատչելիության նորմերը:

Մատչելիության սկզբունքները (ստանդարտները) և պահանջները հաստատված չեն որևէ իրավական ակտով (հաստատված է միայն ուղեցույցը), իսկ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության մշակած ծառայությունների թվայնացման ուղեցույցի բաղկացուցիչ մաս կազմող թվայնացման սկզբունքների (ստանդարտների, ներառյալ՝ մատչելիության սկզբունքները) հաստատման համար օրենսդրական հիմքեր չկան:

Ուստի պետք է աշխատել գործող օրենսդրության մակարդակում: Ըստ մեր դիտարկումների, Վանաձորում Ճարտարապետահատակագծային առաջադրանքի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստող

ընդունող հանձնաժողովի անդամների կարողությունների զարգացման միջոցով միայն հնարավոր կլինի«Ճարտարապետահատակագծային առաջադրանք» փաստաթղթի միջոցով ճիշտ գնահատել իրավիճակը հաստատության մուտքի մոտ և ներսում: Նրանք շահագրգռվածություն կունենան իրենց կատարած աշխատանքները ներկայացնել հանրությանը: Հանձնաժողովի աշխատանքները կանոնակարգող փաստաթղթի օգնությամբ նրանք պարբերաբար նիստեր կգումարեն, կգնահատեն իրենց աշխատանքները: Նրանց մոտ կբարձրանա հաշվետվողականությունը:

Շենք-շինությունների Ճարտարապետահատակագծային առաջադրանքի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստող ընդունող հանձնաժողովի անդամներըկարող են լինել տարբեր կառույցների ղեկավարներ և ներկայացուցիչներ՝ այդ թվում Լոռու մարզպետը և մարզպետարանի քաղաքաշինության վարչությունը, Վանաձորի քաղաքապետը և քաղաքապետարանի ճարտարապետության բաժինը, քաղաքաշինական, բնապահպանական, սանիտարահիգիենիկ ծառայության, հակահրդեհային տեսչությունները, հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունները: Մեր դիտարկումներով մինչ այսօր ընդունող հանձնաժողովը առհասարակ հանձնաժողովի նիստ չի անցկացրել, գործընթացում ցուցաբերել են անհատական մոտեցում, շինարարական նորմերի նկատմամբ նրանց դիտարկումները եղել են անհատական և սուբյեկտիվ: Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին համապատասխանությունը հավաստող ընդունող հանձնաժողովի ակտը կազմվում է «Ճարտարապետահատակագծային առաջադրանք» փաստաթղթի հիման վրա, որտեղ «Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ» պարբերության 18 կետում ասվում է՝ «հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ» այս կետը շրջանցող կառույցը չի ստանում համապատասխան փաստաթուղթը, ուստի բոլոր կառույցները անխտիր շենքի մուտքի մոտ պատրաստում են թեքահարթակ, որը գրեթե միշտ չի համապատասխանում նորմերին: Հանձնաժողովի անդամները, ստանալով համապատասխան գիտելիքներ և իրենց ձեռքի տակ ունենալով համապատասխան նորմատիվները, հնարավորություն կունենան Ճարտարապետահատակագծային առաջադրանք» փաստաթղթի միջոցով ճիշտ գնահատել իրավիճակը հաստատության մուտքի մոտ և ներսում: Նրանք շահագրգռվածություն կունենան կատարած աշխատանքները ներկայացնել հանրությանը: Հանձնաժողովի աշխատանքները կանոնակարգող փաստաթղթի օգնությամբ նրանք պարբերաբար նիստեր կգումարեն, կգնահատեն իրենց աշխատանքները: Նրանց մոտ կբարձրանա հաշվետվողականությունը:

Քաղաքաշինության տեսչական մարմինների մոտ կարողությունների բարձրացումն ու ՀԿ-ների հետ աշխատանքի արդյունքում հետզհետե շենքերի ու շինությունների կառուցման և շահագործման ժամանակ միջազգային առաջադեմ պահանջները հաշվի կառնվեն, և Վանաձորի գործող հասարակական նշանակության շենքերի ու շինությունների առնվազն 15 %-ը կհարմարեցվեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան:

Առաջարկություններ

- Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ- ներին ներգրավել հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների ճարտարապետահատակագծային առաջադրանքների նախագծման թույլատվությունների տրամադրման գործընթացում:
- Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀԿ- ներին ներգրավել ՀՀ պետական բյուջեի և վարկային միջոցների հաշվին կառուցվող և վերակառուցվող շենքերի և շինությունների նախագծային առաջարկների մշակման գործընթացում:
- Համայնքային բյուջեով նախատեսել գումարներ՝ հանրային նշանակության վայրերում նորմերին համապատասխան թեքահարթակ, վերելակ կառուցելու և այլ հարմարեցումներ իրականացնելու համար և ՀԿ-ների ներկայացուցիչների հետ համագործակցությամբ ընտրվեն այդ տարածքները:
- Թեքահարթակների, վերելակների համար նախատեսված գումարները պետք է տարեցտարի էականորեն աճեն և ներառվեն հաջորդ տարիների բյուջեներում: Այդ գործընթացներին մասնակցեն նաև ՀԿ-ները, որոնց մասնակցությամբ և համապատասխան մասնագետների կողմից տրվեն կատարված աշխատանքների վերջնական գնահատականը:
- Քաղաքապետարան-մասնավոր հատված-ՀԿ համագործակցությամբ ձևավորել ուսումնասիրություն իրականացնող խումբ, բոլոր հանրային օգտագործման վայրերում ձեռնարկել ուսումնասիրություն և արդյունքում դիտարկել, արդեն կառուցված որ հանրային օբյեկտների դիմաց է հնարավոր կառուցել նորմերին համապատասխան թեքահարթակներ, և այդ նպատակով բոլոր կառույցներին քաղաքապետարանի կողմից տրամադրել անվճար նախագծեր:
- Կազմակերպել ուսուցողական դասընթացներ միջավայրի մատչելիության նորմերի վերաբերյալ;
- Բարձրացնել ՀՈՒԱ և նրանց ընտանիքների անդամների կարողություններն ու հմտությունները այս ոլորտի վերաբերյալ, որպեսզի վերջիններս կարողանան իրականացնել արդյունավետ ՇՊ:

Տեղեկացնում ենք, որ նշված շինարարական նորմերը տեղադրված են նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման www.arlis.am կայքում, իսկ կանոնների հավաքածուները՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի www.minurban.amպաշտոնական կայքի «Իրավական ակտեր» բաժնի «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցանկ» ենթաբաժնում: